


ՊԱՅՄԱՆՔ
Յարեհան գին Կ. Պոլսոյ հմր. 40 Մճ.
Պաւատաց 2 խրա
Վեցամս. Կ. Պոլսոյ 3 Մճ.
Պաւատաց 4 խրա
(տար երկիրներու
Յանուարու տողը մէկ անգամի հա-
մար 3 դուրուչ, երկու անգամի հա-
մար 2 դրչ է. աւելի անգամներու
համար զատ սահարդու թիւն կըլ-
այ :
Իւրաքանչիւր թիւ 40 փարա արծ :



ԼՐԱԳԻՐ

ՀԱՆԱՊԱԶՕՐԵԱՅ

ՊԱՅՄԱՆՔ
Դուրս գնացած լրագրաց ճանրու
ծախքը թմրագրութեան վրայ է :
Լրագրաց վերաբերեալ նամակ
կամ որ և իցէ գրութիւն թմրագրի
— Տնօրէնին պիտի ուղարկուի : Վսլա-
միա Սանտրքըրար ճաւառի տի իւ
198, Նօրօ խան, Մասիսի գրասեն-
եակը :
Ճանրու ծախքը շվճարուած նա-
մակ չընդունուիր :
Չտպուած նամակ, յողուած, եւ
ետ չեն տրուիր :

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 14 ԴԵԿՏԵՄԲԵՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ռուսիոյ վիճակը ներքին փոթո-
րիկներու տուր տեսարան մը կ'ըն-
ծայէ : Ոչնչականաց անցեալներն ը-
րած դաւադրութիւնը խիստ հաւա-
նականաբար վերջինը չպիտի լինի :
Ստեղծիւնս սոսկալի, յանդգնութեան
մէկ ապացոյցն ևս տուին՝ կայսեր
վերադարձէն անմիջապէս ետքն յայ-
տարարութիւն մը հրատարակելով,
որ կ'ըսեն թէ իրենք վճատած չեն,
այլ նոր փորձառութեամբ մը պիտի
շանան միշտ իրենց նպատակն յաջո-
ղութեամբ չի գրուի հանել : Աւել-
սանդր Բ. արեւմտուշտ բռնաւորու-
թեան անձնաւորութիւն մը կը հա-
մարին, որոյ կառավարութիւնը ժո-
ղովրդեան կամքն երբեք չ'յարգեր,
և անոր ստացուածքն յափշտակողնե-
րն ու հարստահարողները կը պաշտ-
պանէ : Սնմանքն կ'ապանաւորին, հա-
զարաւորը ի Սիւլերիա կ'աքորին, և
այս ամեն բաներուն համար Ոչնչա-
կանք եղեւնական լեզուաւ կը յայ-
տարարեն թէ Աւելքսանդր Բ. մահ-
ուան արժանի է : Բայց շնորհ կ'ընեն
յարեւ որ եթէ կայսրն ընդհանուր
քուէով ազատութիւն ընտրեալ և ընտ-
րողներէն հրահանգ ստացող ժողովոյ
մը յանձնէ իւր իշխանութիւնն, անոր
յոյժով պիտի ներեն : Մինչև որ այս-
պէս չլինի, յեղափոխականք անո-
ղոք պատերազմ մը կը հրատարակեն
և Ռուսիոյ ժողովուրդն իրենց օգ-
տութեան կը կոչեն :

Վեհապետաց դէմ եղեւնական
դաւադրութեան սկզբունքն երբեք
չկրնար արդարանալ աղատութեան
կամ ժողովրդական իրաւանց պատ-
րասկներով : Ռուսիոյ Ոչնչականաց
այս ծայրայեղ սկզբունքները լուսա-
ւորեալ աշխարհի առջիւ տխուր կեր-
պարանք մը կուտան իրենց : Այսու
ամենայնիւ Ռուսիոյ ներքին վիճակն
ալ մեծ դոյններով կը ներկայեն :
Կառավարութեան չի գործ դրած
բռնութիւններուն յեղափոխականք
բռնութեամբ կը պատասխանեն : զը-
րեթէ մին զմեզ կը ծնի իմաստուն
ազատութիւն մը չկրնար այնչափ ան-
պատեհութիւններ ունենալ, որչափ
անկողար և բացարձակ իշխանու-
թիւնն, որոյ հաստատած պատե-
րապետական ատեւանները, պաշարման
դերութիւնը, իրենց օրինակական վարչու-
թիւնը, լրտեսութիւնները, բանտար-
կութիւններն ու արքայները չկրնին
միևնոյն տարուան մէջ վեհապետին
անձին դէմ ուղղեալ երկու դաւադ-
րութեանց առաջնն առնուլ, կամ
զանոնք առաջուց դնել :

Թէև յեղափոխական հիւանդու-
թիւնը Գերմանիոյ մէջ ալ կայ, և իր-

լանտայի մէջ Յէնեանք նորէն խլաղի
սկսան, և Գաղղիա 1871ի Բոմբե-
նիսթներուն դեռ նոր արձակում և
ներսդութիւն շնորհեց, այսու ամե-
նայնիւ այս երկիրներուն մէջ միև-
նոյն սաստկութիւնը չ'ուցներ : Ա-
նուանալի է սակայն, որ համաշ-
խարհային յեղափոխական կուսակ-
ցութիւն մը կայ Եւրոպոյ մէջ, ո-
րուն աղբեղութիւնը մերթ մէկ կողմ
և մերթ ուրիշ կողմ կը տեսնուի :
Ասոր դէմ մարտնչելու համար Պիս-
մարը իշխանը տերութեանց հրաւեր
կարդացած էր, և վերջերս կ'ըսուէր
թէ Շուվալովի կոմսը Պերլինէն անց-
նելու առթիւ պիտի բանակցի եղեր՝
ոչ միայն Արեւելեան լոնդոնի վրայ
Պերլինի դաշնագրին հետեւելով, այլ
և յեղափոխականաց նկատմամբ բռն-
ութիւնը ընթացիկ համար համաձայ-
նութիւն պիտի հաստատէր ընդ մէջ
Ռուսիոյ և Գերմանիոյ :

Ռուսիա առ այժմ այս ներքին
յուզմամբ դրաղեալ է, և արտաքին
աշխարհալարութեան գործնական
ասպարէզէն քաշուած : Հաղիւ եր-
բեմն ուղղութիւն կը մատուցանէ
այնպիսի խնդրոց, որք իրեն անմի-
ջական յարաբերութիւն ունին, ինչ-
պէս է իւր հաւատարմի՝ դաշնակից
Գարտապալաններուն իշխանութիւն
դուր : Կըսուէր թէ Բեդրսպուրդի մէջ
գիւսանալիտաց մեծ խորհուրդ մը
պիտի գումարի կայսեր նախագա-
հութեան ներքեւ : Անդրոյ լրագիրը
այն խորհուրդին վրայ յօդուածներ
անդամ հրատարակեցին, սակայն նը-
շանակեալ դեկտ. 9ի օրն եկաւ, և
բնաւ այնպիսի բան մը չեղաւ : Կոր-
չաքով իշխանն Արեւմտեան Եւրոպա-
յէն վերադառնալով, պարզապէս
կայսեր հրամանաւ իւր պաշտօնա-
տան զլուխ անցաւ : Հաւանական է
որ քանի մը դեպքաւորական փոփո-
խութիւնք լինին : Մայրաքաղաքիս
դեպքան Լոպատով իշխանը Լոնտրա
հասած է, բայց հեռագրելը չըսեր
թէ արդեօք դեպքան անուանած է
հոն : Վիեննայի դեպքան Պ. Նովի-
քով Կ. Պոլսոյ դեպքանութեան պի-
տի անուանի եղեր : Պ. Նովիքով ճան-
չուած է իւր Սլավութեան կուսա-
կից և իշխանութիւնը զօրավարին դու-
գորդը : Բայց տակաւին կանխահաս
է դուշակել թէ արդեօք ստուգիւ
մայրաքաղաքիս դեպքան պիտի լի-
նի : Լոպատով իշխանը լաւ տպաւո-
րութիւն ըրած էր հոս, և իւրոպա-
կան թերթի մը խօսքին նայելով, անց-
եալները Վեհ. Սլավութեան խօսակցու-
թեան մը մէջ դահութիւն յայտնե-
ր է ըսելով թէ « խիստ հաճելի մարդ
մ'է, քանզի երբեք բարենորոգմանց
վրայ չ'ստիր » :

Իսկ իշխանութիւնը զօրավարին հա-
մար ըսուած էր թէ Հուովի դեա-
պան պիտի անուանի : Սնցեալներն

իւր սոսկ հիւր իշխանութիւնը խաղիւ
բնակած էր և լրագրաց ոմանց խօս-
քին նայելով յարաբերութիւններ
ունեցած էր իւրեւ իւրեւ ընկիւ-
րութեան հետ, որոյ նպատակն է
Աւստրիոյ իշխանութեան ներքեւ զըա-
նուած թիւթով և թրիէստի դաւառ-
ներն խաղիւ հետ միացնել : Իւր
Հուովի դեպքանութիւնը կրնար ի-
տալիոյ և Ռուսիոյ միջև սերտ բա-
րեկամութեան նպատակ մ'ունենալ
ընդդէմ Աւստրիոյ : սակայն լրագիրը
սուտ կը հանեն այս զրպոյցն : Իշխա-
նութիւնը կոմսը տակաւին նոր պաշտօն
մ'ընդունած չէ :

ԿՈՊՈՅՏ ՏԵՏՐԱԿ

Թիւ 22.

Փոխ-հեղափոխ Լուիս - Սուլէյման Բեք
Տիպիս 8 փետր. 1879

« Ինչպէս արդէն ծանուցի Ձեր
վսեմութեան, Կոպիստի կառավա-
րութիւնը ձեռնարկ անկողնն որոշեց
չընդունիլ վսեմայ, Պայագիւտի և ու-
րիշ տեղերու Օսմանեան Հայ Ժողո-
ղովուրդն, որ կողմէր Ռուսական հը-
պատակ լինել : Այս միջոցը քիչ մը
դժգոհութիւն պատճառեց, որ յե-
տոյ աւելի ծանրացաւ սա իրողու-
թեան վրայ թէ երբ Ռուսական սահ-
մանաղիւսի դաւառաց երկրագործ
Հայ բնակիչները խնդրեցին որ կար-
սի փաշայի վրայ պարտաւ հողերն ու
գիւղերն իրենց տրուին, և կը յու-
սոյին դիւրին պայմանք ձեռք բե-
րել, Ռուսական կառավարութիւնը
մերժողական պատասխան տուաւ, և
նախապատիւ համարեց Գերմանացի
և Ռուս (Կոպիստի) դաղիւսականաց
(Մարտիկներ) տալ այդ հողերն :

« Հայոց մէկ ուրիշ գտնգատնալ,
Կարսի մեծ մզկիթին, որ Ժամանակաւ
Հայոց եկեղեցի մ'էր, Ռուսական ե-
կեղեցւոյ փոխուիլն է : Հայք կըսեն
թէ Ռուսերն այդ շէնքն իւրացնելով
ճիշդ թրքաց պէս վարուած են :

« Երևանայ մօտ Էջմիածնոյ վան-
քին մէջ, որ Հայ Պատրիարքութեան
բնակավայրն է, երկար Ժամանակէ
ի վեր Ռուսական կեղծ թղթաբամ
չինուիլն երևան հանուեցաւ :

« Միաբանաց մին միւսներուն հետ
կուռելով, և իւր կեանքը վտանգի
մէջ տեսնելով, այս գործն իմաց տը-
ւաւ Ռուսական իշխանութեանց :

« Պատրիարքն ինք, որ քիչ Ժա-
մանակ յետոյ մեռաւ, ձերբակալու-
թեանց տեղի ունենալէն միայն քանի
մ'օր առաջ տեղեկացաւ այս գործին :
Սակայն փոխ-պատրիարքն կամ ե-
պիսկոպոսն, որ զլուսաւոր ոճրագործն
եղած լինել կը թուի, այլոց հետ դա-
տաստանի ներքեւ է : »

Տիպիսի Անգղիական փոխ-հիւ-

պատասխան այս տեղեկութեանց մէջ
յայտնի սխալ մը կայ, այն է կաթո-
ղիկոսին քանի մ'օր յետոյ վախճանին
որովհետեւ եթէ չեմք սխալիլ, Էջմի-
ածնոյ վանքին մէջ այդպիսի գործ
մը նոյն խիւ ներկայ կաթողիկոսի ո-
րով երևան հանուած էր : Մեր չար-
եաց մէկ մեծ մասն արդէն մեր ան-
խոհմութեան և անհեռատեսու-
թեան անխուսելի հետեւանքն եղած
են : Չեմք հասկնար թէ Ռուսական
կառավարութեան պէս Կիւրաքիւրիւ
և արթուն կառավարութիւն մ'իւր
չահուց դէմ Էջմիածնոյ վանքին պա-
տերուն մէջ նիւթուած այս դաւը տես-
նելով, այդ վանքին դէմ ո'րչափ և
ինչպիսի հակադական միջոցներ ձեռ-
առելու իրաւունք չ'պիտի ունենայ :
Բայց դժուար չէ ըմբռնել որ այս ա-
մեն դատապարտելի գործերն ոչ մի-
այն այս կամ այն փառասէր և ար-
ծաթաւոր ռուսահայ միաբանին, այլ
ամբողջ ազգին շահուց վնաս կը պատ-
ճառեն :

Թիւ 23

Փոխ-հեղափոխ Պիէ-Էմիլ - Սուլէյման Բեք
Տրապիզոն 1 տպրիլ, 79

« Մայ Լօրա »

« Նախընթաց դրութեան մը մէջ
համառօտալ ծանուցի թէ Կարնոյ
հաւանական կաթողիկէ Հայոց արքե-
պիսկոպոս Գեր. Միւլքիսեղեկեան
վերջերս Կարսի մէջ եկեղեցի մ'և
Սրբ-վինի մէջ աւելիսկոպոս մը նուի-
րագործեց : Արքեպիսկոպոսն ամեն
տեղ Ռուսական իշխանութեանց կող-
մանէ վայելուչ պատուով ընդունե-
աւած էր :

« Այժմ կը լսեմ թէ Գերմանոյի դո-
րաւարն Արքեպիսկոպոսն եպիսկոպոսին
տեղեկութիւն տուեր է թէ Միւլքիսեղ
մեծ դուքսն ի մօտոյ Պաթմուս պա-
տեւուն պատճառաւ՝ Հայ հասո-
բակութեան յարմար առիթ մ'էր ի-
րենց խնդիրները ներկայելու անոր,
և յարեց թէ Միւլքիսեղ գաղափար
(Գերմանոյի զօրավարն) յանդիմանած
էր՝ օտար եկեղեցականի մը առանց
յատուկ արտօնութեան Ռուսիա մըա-
նել և նուիրագործութիւններ ընելը
թոյլատրած լինելուն պատճառաւ :

« Չօրավարն ազգաբարեց Արքե-
պիսկոպոսին թէ ոչ ևս իշխա-
նութիւն ունէր իւր հաշիւները
թուրքիոյ մէջ նստող եկեղեցականաց
տաւալ, ինչպէս ըրած էր մինչև ցարդ,
այլ այսուհետեւ իւր թիւմին եկամտից
և հասոթից վեցամսեայ մէկ հաշիւ-
ւը պարտի ներկայելու Ռուսական կա-
ռավարութեան, և թէ կրնար Հու-
մի հետ հաղորդակցիլ, որոյ հետ
Ռուսիա կրօնական պայմանագիր մը
բանակցելու վրայ է, բայց ոչ Կ-
Պօլսոյ հետ :

« Չօրավարը վերջացուց՝ անուգ-
ղակի կերպիւ իմաց տալով որ ըստ

